ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ

Հ Ր Ա Մ Ա Ն

«12» փետրվարի 2019թ. N 33 - Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՎԱՅՐԻ ԿԵՆԴԱՆԻՆԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐԻ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐՈՎ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՄԱՍԻՆ (ՍԻՐՈՂԱԿԱՆ ՈՐՍ ԵՎ ՁԿՆՈՐՍՈՒԹՅՈՒՆ, ՁԿՆՈՐՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՈՐՍԻ ՕԲՅԵԿՏ ՉՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԿԵՆԴԱՆԻՆԵՐԻ ՈՐՍ) ՀԱՅՏԻ ԵՎ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ՁԵՎԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Կենդանական աշխարհի մասին» օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի թ.3-րդ կետով

Հ Ր Ա Մ Ա Յ Ո Ւ Մ Ե Մ՝

1. Հաստատել.

1) Հայաստանի Հանրապետության տարածքում վայրի կենդանիների տեսակների սոցիալական նպատակներով օգտագործման մասին (սիրողական որս և որսի օբյեկտ չհանդիսացող կենդանիների որս) հայտի և պայմանագրի ձևերը՝ համաձայն N1 հավելվածի,

2) Հայաստանի Հանրապետության տարածքում վայրի կենդանիների տեսակների սոցիալական նպատակներով օգտագործման մասին (սիրողական ձկնորսություն և ձկնորսության օբյեկտ չհանդիսացող կենդանիների որս) հայտի և պայմանագրի ձևերը՝ համաձայն N2 հավելվածի:

2. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող օրվանից:

ՆԱԽԱՐԱՐ Է. ԳՐԻԳՈՐՅԱՆ

«12» փետրվարի 2019թ.
ք. Երևան

Հավելված N1
Հաստատված է
բնապահպանության նախարարի
2019 թվականի փետրվարի 12 -ի N 33 - Ն հրամանով

Ձև 1

Հ Ա Յ Տ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՎԱՅՐԻ ԿԵՆԴԱՆԻՆԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐԻ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐՈՎ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ (ՍԻՐՈՂԱԿԱՆ ՈՐՍ ԵՎ ՈՐՍԻ ՕԲՅԵԿՏ ՉՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԿԵՆԴԱՆԻՆԵՐԻ ՈՐՍ) ՄԱՍԻՆ

_____

_____
(Իրավաբանական անձի անվանումը և գտնվելու վայրը կամ ֆիզիկական անձի անուն, ազգանունը, բնակության վայրը)

_____

_____
Օգտագործման ենթակա տարածքը (մարզը, որսահանդակը)

_____

_____ Որսամիջոցները

_____

_____
Ֆիզիկական անձինք՝ որսորդական վկայականի և որսորդական զենք կրելու վկայականի համարները

N	Վայրի կենդանու անվանումը՝ (տեսակը)	Քանակը (հատ)	Օգտագործման ժամանակը

*Հայտերը կարող են ընդունվել նաև սիրողական ձկնորսության և որսի հայտերի ընդունման էլեկտրոնային համակարգի միջոցով:

Հայտատու՝ _____
(անուն, ազգանուն, ստորագրությունը)

Հայտը ներկայացնելու ամսաթիվը _____

Ձև 2

ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՎԱՅՐԻ ԿԵՆԴԱՆԻՆԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐԻ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐՈՎ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ (ՍԻՐՈՂԱԿԱՆ ՈՐՍ ԵՎ ՈՐՍԻ ՕԲՅԵԿՏ ՉՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԿԵՆԴԱՆԻՆԵՐԻ ՈՐՍ) ՄԱՍԻՆ

ք. Երևան «-----» ----------2019 թ.

Բնապահպանության նախարարությունը՝ կենդանական աշխարհի պաշարի օգտագործման իրավունք տրամադրողը (այսուհետ՝ լիազոր մարմին), ի դեմս՝ _____մի կողմից, և
(անունը, ազգանունը, պաշտոնը)
_____
(իրավաբանական անձի անվանումը, պետական գրանցման վկայականի համարը և գտնվելու վայրը կամ ֆիզիկական անձի անունը, ազգանունը և բնակության վայրը)
_____
(այսուհետ՝ Կենդանական աշխարհի օբյեկտների օգտագործող)
ի դեմս՝ _____ (անուն, ազգանուն)

մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. Պայմանագրի առարկան

1.1. Սույն պայմանագրով լիազոր մարմինը Կենդանական աշխարհի օբյեկտների օգտագործողին իրավունք է վերապահում Հայաստանի Հանրապետության
_____ տարածքում (մարզում)
_____ որսամիջոցներով
որսալ՝

N	Վայրի կենդանու անվանումը՝ (տեսակը)	Քանակը (հատ)	Օգտագործման ժամանակը	Որսահանդակը	Բնօգտագործման վճարի չափը
Ընդամենը					

1.2. Հրազենով որս իրականացնելու դեպքում լրացնել՝
Որսորդական զենք կրելու վկայականների N __
տրված_____
___կողմից
«___» _____ _____ թ.

2. Կողմերի իրավունքները և պարտականությունները

2.1. Լիազոր մարմինը իրավունք ունի՝

2.1.1. պահանջել օգտագործել սույն պայմանագրով սահմանված քանակից ոչ ավել և ընտրված տեսակին համապատասխան վայրի կենդանիներ,

2.1.2. պահանջել սույն պայամանագրի կնքման հետ առնչվող Հայաստանի Հանրապետության օրենքներով և ենթաօրենսդրական նորմատիվ իրավական այլ ակտերով սահմանված վճարումները հավաստող փաստաթղթերը՝ մինչև պայմանագրի կնքման գործընթացը սկսելը:

2. 2. Լիազոր մարմինը պարտավոր է՝

2.2.1 Կենդանական աշխարհի օբյեկտների օգտագործողին տրամադրել կենդանական աշխարհի օբյեկտների պահպանության վերաբերյալ տեղեկատվություն:

2.3. Կենդանական աշխարհի օբյեկտների օգտագործողն իրավունք ունի՝

2.3.1 օգտագործել սույն պայմանագրում նշված որսված վայրի կենդանիները՝ պայմանագրի պայմաններին և տրամադրման նպատակին համապատասխան,

2.3.2 լիազոր մարմնի հետ համաձայնեցնելուց հետո իրականացնել վայրի կենդանիների որսապաշարների բարելավման միջոցառումներ,

2.3.3 պահանջել վաղաժամկետ լուծելու պայմանագիրը՝ սույն պայմանագրի 6.1-րդ կետում նշված դեպքերում:

2.4 Կենդանական աշխարհի օբյեկտների օգտագործողը պարտավոր է՝

2.4.1 գործել Հայաստանի Հանրապետության օրենքներով և ենթաօրենսդրական նորմատիվ իրավական այլ ակտերով սահմանված կարգով,

2.4.2 վայրի կենդանիներն օգտագործել բացառապես սույն պայմանագրի պայմանների և տրամադրման նպատակին համապատասխան,

2.4.3 պահպանել պայմանագրում նշված տարածքի վայրի կենդանիների տեսակային բազմազանությունը և չխախտել բնական միջավայրի ամբողջականությունը,

2.4.4 որսորդական զենքով որսն իրականացնել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով զենք կրելու թույլտվությամբ և սահմանված ժամկետներում,

2.4.5 որսն իրականացնելիս իր հետ ունենալ՝ կենդանիների որս իրականացնելու թույլտվությունը (Հայաստանի Հանրապետության տարածքում վայրի կենդանիների տեսակների սոցիալական նպատակներով օգտագործման (սիրողական որս և որսի օբյեկտ չհանդիսացող կենդանիների որս) մասին պայմանագիրը),

2.4.6 պահպանել Հայաստանի Հանրապետության տարածքում կենդանիների սիրողական որսի և որսի օբյեկտ չհանդիսացող կենդանիների որսի կատարման կանոններով սահմանված պահանջները,

2.4.7 Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված չափերով և կարգով հատուցել բնությանը պատճառած վնասները,

2.4.8 պահպանել հակահրդեհային անվտանգության, իսկ որսորդական զենքով որս իրականացնելու դեպքում՝ նաև զենքի օգտագործման անվտանգության համար Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված պահանջները,

2.4.9 իր կողմից պայմանագիրը վաղաժամկետ դադարեցնելու դեպքում ոչ ուշ, քան 10 օր առաջ լիազոր մարմնին պատշաճ կերպով գրավոր տեղեկացնել դրա մասին,

2.4.10 իրավաբանական անձի դեպքում՝ սույն պայմանագրի գործողությունն ավարտվելուց հետո սույն պայմանագրի հատուկ դրույթներով սահմանված ժամկետներում և կարգով լիազոր մարմնին ներկայացնել որսի պայմանագրային պարտականությունների կատարման վերաբերյալ տեղեկատվություն:

3. Պայմանագրով կատարվող վճարները և հաշվարկները

3.1. Կենդանական աշխարհի օբյեկտների օգտագործողը Հայաստանի Հանրապետության օրենքներով և ենթաօրենսդրական նորմատիվ իրավական այլ ակտերով սահմանված կարգով պետական բյուջե է վճարում _____ դրամ բնօգտագործման վճար:

4. Վեճերի լուծման կարգը

4.1 Սույն պայմանագրից ծագած վեճերը լուծվում են դատական կարգով:

5. Անհաղթահարելի ուժի ազդեցությունը (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

5.1. Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության արդյունք, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե անհաղթահարելի ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

6.Պայմանագրի վաղաժամկետ դադարեցնելու հիմքերը

6.1. Լիազոր մարմնի կողմից սույն պայմանագիրը կարող է միակողմանի և վաղաժամկետ լուծվել, եթե Կենդանական աշխարհի օբյեկտների օգտագործողը՝

6.1.1 վայրի կենդանիներն օգտագործել է Հայաստանի Հանրապետության օրենքների, ենթաօրենսդրական նորմատիվ իրավական այլ ակտերի և սույն պայմանագրի պայմանների խախտումներով,

6.1.2. լրիվ կամ մասնակիորեն հրաժարվում է իր պայմանագրային պարտավորությունների կատարումից,

6.1.3. վայրի կենդանիների օգտագործման համար տրված տվյալ տարածքը վերցվում է պետական կամ հասարակական կարիքների համար,

6.1.4. ստեղծվել է ակնհայտ սպառնալիք կենդանական աշխարհի օբյեկտների բնական վերարտադրության կամ բնակչության անվտանգության համար,

6.1.5. խախտել է սույն պայմանագրի 2.4.1-2.4.10-րդ կետերով սահմանված պարտականություններից որևէ մեկը:

6.2. Վերոնշյալ հիմքերով սույն պայմանագիրը վաղաժամկետ լուծելու դեպքում լիազոր մարմինը որևէ գույքային պատասխանատվություն չի կրում:

6.3. Վերոնշյալ հիմքերով սույն պայմանագիրը վաղաժամկետ լուծելու դեպքում Կենդանական աշխարհի օբյեկտներ օգտագործողին բնօգտագործման վճարը չի վերադարձվում:

7. Այլ դրույթներ

Սույն պայմանագիրը կազմված է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Կողմերից յուրաքանչյուրին տրվում է մեկ օրինակ:

8. Հատուկ դրույթներ

_____
_____
_____
_____

9. Պայմանագրի ժամկետը

Պայմանագրի ժամկետը սահմանվում է ____ _____թ-ից մինչև _____թ.:

10. Կողմերի հասցեները և ստորագրությունները

Կենդանական պաշար օգտագործող	Լիազոր մարմին
_____	_____
_____	_____
_____	_____
(ստորագրություն)	(ստորագրություն)
	Կ.Տ

Հավելված N2
Հաստատված է
բնապահպանության նախարարի
2019 թվականի փետրվարի 12 -ի N 33 - Ն հրամանով

Ձև 1

Հ Ա Յ Տ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՎԱՅՐԻ ԿԵՆԴԱՆԻՆԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐԻ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐՈՎ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ (ՍԻՐՈՂԱԿԱՆ ԶԿՆՈՐՍՈՒԹՅՈՒՆ և ԶԿՆՈՐՍՈՒԹՅԱՆ ՕԲՅԵԿՏ ՉՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԿԵՆԴԱՆԻՆԵՐԻ ՈՐՍ) ՄԱՍԻՆ

_____

(Իրավաբանական անձի անվանումը և գտնվելու վայրը կամ ֆիզիկական անձի անուն, ազգանունը, բնակության վայրը)

_____

Օգտագործման ենթակա տարածքը (մարզը)

_____

Որսամիջոցները

_____

Օգտագործման ժամանակահատվածը

N	Ձկնատեսակի անվանումը՝ (տեսակը)	Քանակը (կգ)

*Հայտերը կարող են ընդունվել նաև սիրողական ձկնորսության և որսի հայտերի ընդունման էլեկտրոնային համակարգի միջոցով:

Հայտատու՝

_____

(անուն,ազգանուն, պաշտոնը և ստորագրությունը)

Հայտը ներկայացնելու ամսաթիվը _____

Ձև 2

ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՎԱՅՐԻ ԿԵՆԴԱՆԻՆԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐԻ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐՈՎ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ (ՍԻՐՈՂԱԿԱՆ ՁԿՆՈՐՍՈՒԹՅՈՒՆ և

ՁԿՆՈՐՍՈՒԹՅԱՆ ՕԲՅԵԿՏ ՉՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԿԵՆԴԱՆԻՆԵՐԻ ՈՐՍ) ՄԱՍԻՆ

ք. Երևան « » _____ թ.

Բնապահպանության նախարարությունը՝ կենդանական աշխարհի պաշարի օգտագործման իրավունք տրամադրողը (այսուհետ՝ լիազոր մարմին), ի դեմս՝ _____ մի կողմից, և

(անունը, ազգանունը, պաշտոնը)

սիրողական ձկնորսությամբ զբաղվել ցանկացողը ի դեմս՝

(անուն, ազգանուն)

մյուս կողմից կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. Պայմանագրի առարկան

1.1. Սույն պայմանագրով լիազոր մարմինը սիրողական ձկնորսությամբ զբաղվել ցանկացողին իրավունք է վերապահում Հայաստանի Հանրապետության ---------- տարածքում (մարզ) _____ որսամիջոցներով որսալ՝

N	Ձկնատեսակի անվանումը՝ (տեսակը)	Քանակը (կգ)	Օգտագործման Ժամանակահատված	Բնօգտագործման վճարի չափը
Ընդհանուր				

2. Կողմերի իրավունքները և պարտականությունները

2.1. Լիազոր մարմինն իրավունք ունի՝

2.1.1. պահանջել օգտագործել սույն պայմանագրով սահմանված քանակից ոչ ավել և ընտրված տեսակին համապատասխան վայրի կենդանիներ,

2.1.2. պահանջել սույն պայամանագրի կնքման հետ առնչվող Հայաստանի Հանրապետության օրենքներով և ենթաօրենսդրական նորմատիվ իրավական այլ ակտերով սահմանված վճարումները

հավաստող փաստաթղթերը՝ մինչև պայմանագրի կնքման գործընթացը սկսելը:

2. 2. Լիազոր մարմինը պարտավոր է՝

2.2.1 Կենդանական աշխարհի օբյեկտների օգտագործողին տրամադրել կենդանական աշխարհի օբյեկտների պահպանության վերաբերյալ տեղեկատվություն:

2.3. Կենդանական աշխարհի օբյեկտների օգտագործողն իրավունք ունի՝

2.3.1 օգտագործել սույն պայմանագրում նշված որսված վայրի կենդանիները՝ պայմանագրի պայմաններին և տրամադրման նպատակին համապատասխան,

2.3.2 պահանջել վաղաժամկետ լուծելու պայմանագիրը՝ սույն պայմանագրի 6.1-րդ կետում նշված դեպքերում:

2.4 Կենդանական աշխարհի օբյեկտների օգտագործողը պարտավոր է՝

2.4.1 գործել Հայաստանի Հանրապետության օրենքներով և ենթաօրենսդրական նորմատիվ իրավական այլ ակտերով սահմանված կարգով,

2.4.2 վայրի կենդանիներն օգտագործել բացառապես սույն պայմանագրի պայմանների և տրամադրման նպատակին համապատասխան,

2.4.3 պահպանել պայմանագրում նշված տարածքի վայրի կենդանիների տեսակային բազմազանությունը և չխախտել բնական միջավայրի ամբողջականությունը,

2.4.4 որսն իրականացնելիս իր հետ ունենալ՝ կենդանիների որս իրականացնելու թույլտվությունը (Հայաստանի Հանրապետության տարածքում վայրի կենդանիների տեսակների սոցիալական նպատակներով օգտագործման (սիրողական որս և որսի օբյեկտ չհանդիսացող կենդանիների որս) մասին պայմանագիրը),

2.4.5 ժամանակավորապես դադարեցնել սիրողական որսը Սևանա լճում՝ խեցգետնի կամ սիգի կամ Սևանա լճի էնդեմիկ ձկնատեսակների ձվադրման և բազմացման ժամանակահատվածներում,

2.4.6 պահպանել Հայաստանի Հանրապետության տարածքում կենդանիների սիրողական որսի և որսի օբյեկտ չհանդիսացող կենդանիների որսի կատարման կանոններով սահմանված պահանջները,

2.4.7 Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված չափերով և կարգով հատուցել բնությանը պատճառած վնասները,

2.4.8 պահպանել հակահրդեհային անվտանգության, իսկ որսորդական զենքով որս իրականացնելու դեպքում՝ նաև զենքի օգտագործման անվտանգության համար Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված պահանջները,

2.4.9 իր կողմից պայմանագիրը վաղաժամկետ դադարեցնելու դեպքում ոչ ուշ, քան 10 օր առաջ լիազոր մարմնին պատշաճ կերպով գրավոր տեղեկացնել դրա մասին:

3. Պայմանագրով կատարվող վճարները և հաշվարկները

3.1. Կենդանական աշխարհի օբյեկտների օգտագործողը Հայաստանի Հանրապետության օրենքներով և ենթաօրենսդրական նորմատիվ իրավական այլ ակտերով սահմանված կարգով պետական բյուջե է վճարում _____ դրամ բնօգտագործման վճար:

4. Վեճերի լուծման կարգը

4.1 Սույն պայմանագրից ծագած վեճերը լուծվում են դատական կարգով:

5. Անհաղթահարելի ուժի ազդեցությունը (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

5.1. Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության արդյունք, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե անհաղթահարելի ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

6.Պայմանագրի վաղաժամկետ դադարեցնելու հիմքերը

6.1. Լիազոր մարմնի կողմից սույն պայմանագիրը կարող է միակողմանի և վաղաժամկետ լուծվել, եթե Կենդանական աշխարհի օբյեկտների օգտագործողը՝

6.1.1 վայրի կենդանիներն օգտագործել է Հայաստանի Հանրապետության օրենքների, ենթաօրենսդրական նորմատիվ իրավական այլ ակտերի և սույն պայմանագրի պայմանների խախտումներով,

6.1.2. լրիվ կամ մասնակիորեն հրաժարվում է իր պայմանագրային պարտավորությունների կատարումից,

6.1.3. ստեղծվել է ակնհայտ սպառնալիք կենդանական աշխարհի օբյեկտների բնական վերարտադրության կամ բնակչության անվտանգության համար,

6.1.5. խախտել է սույն պայմանագրի 2.4.1-2.4.9-րդ կետերով սահմանված պարտականություններից որևէ մեկը:

6.2. Վերոնշյալ հիմքերով սույն պայմանագիրը վաղաժամկետ լուծելու դեպքում լիազոր մարմինը որևէ գույքային պատասխանատվություն չի կրում:

6.3. Վերոնշյալ հիմքերով սույն պայմանագիրը վաղաժամկետ լուծելու դեպքում Կենդանական աշխարհի օբյեկտներ օգտագործողին բնօգտագործման վճարը չի վերադարձվում:

7. Այլ դրույթներ

Սույն պայմանագիրը կազմված է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Կողմերից յուրաքանչյուրին տրվում է մեկ օրինակ:

8. Հատուկ դրույթներ

_____
_____
_____
_____

9. Պայմանագրի ժամկետը

Պայմանագրի ժամկետը սահմանվում է ____ _____ թ-ից մինչև _____ թ.:

10. Կողմերի հասցեները և ստորագրությունները

Կենդանական պաշար օգտագործող	Լիազոր մարմինը
_____	_____
_____	_____
_____	_____
(ստորագրություն)	(ստորագրություն)